Փաստաթղթի անվանում	ԵՄՀ արտոնությունների սահմանման և ուսանողների կրթաթոշակների տրամադրման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-23-04
Հաստատման ամսաթիվ	02/11/2009
Վերջին վերանայման ամսաթիվ	11/10/2021
Հաստատող մարմին	Գիտական խորհուրդ
Մշակող	Որակի ապահովման կենտրոն
Ներդրման/ իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

N	Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն
1	11.10.2021	Կարգն ամբողջությամբ վերափոխվել է հիմքում ունենալով ՈԿՀ ներքին ստուգման արդյունքները. մասնավորապես հստակեցվել են բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի մակարդակում տրամադրվող կրթաթոշակներն ու դրանց պայմանները (Բաժիններ 2, 3, 4):	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
2	11.10.2021	Կարգում ավելացվել են ուսանողներին տրամադրվող արտոնություններն ու զեղչերը (Բաժին 5):	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
3	06/02/2018	Կարգը փոխվել է մասնակիորեն	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
4	09/02/2015	Կարգը փոխվել է մասնակիորեն	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
5	12/12/2014	Կարգը փոխվել է մասնակիորեն	Սուրեն Օհանյան,

Եվրասիա միջազգային համալսարան
ԵՄՀ արտոնությունների սահմանման և ուսանողների կրթաթոշակների տրամադրման կարգ
Հաստատման ամսաթիվ. 02/11/2009/ Վերջին վերանայման ամսաթիվ. 11.10.2021
Փաստաթղթի N. ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-23-04

			Գիտական խորհրդի նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կրթաթոշակների տրամադրման ընդհանուր դրույթներ _____4
2. «Օհանյան» կրթաթոշակի տրամադրամն պայմաններ _____4
3. «Եվրասիա» կրթաթոշակի տրամադրամն պայմաններ _____5
4. «Հետազոտական» կրթաթոշակի տրամադրման պայմաններ_____6
5. Ուսման վարձի զեղչերի տրամադրման պայմաններ _____6

1. Կրթաթոշակների տրամադրման ընդհանուր դրույթներ

1.1. Ուսանողական կրթաթոշակների տրամադրումը Եվրասիա միջազգային համալսարանի բյուջեի ծախսային մասում նախատեսված ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին ուսանողական կրթաթոշակների տրամադրումն է: Ուսանողական կրթաթոշակը ֆինանսական օժանդակություն է գերազանց և լավ առաջադիմություն ցուցաբերած (բարձր ՄՈԳ ունեցող), պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին ֆինանսական խրախուսանքի ձևով:

1.2. Ըստ մասնագիտությունների Համալսարանի կողմից հատկացված ուսանողական կրթաթոշակների քանակը փոփոխական է և կախված է բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների ընդհանուր թվից և առկա ֆինանսական հնարավորություններից:

1.3. Առաջին կուրսի ուսանողները Ուսանողական կրթաթոշակի իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության 2-րդ կիսամյակից: Ըստ առաջադիմության միջին ցուցանիշի ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսանողների ցուցակը:

1.4. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին Ռեգիստրարի կողմից կազմվում և Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորին է ներկայացվում ուսանողների առաջադիմության ցուցակը:

1.5. Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը՝ առաջնորդվելով առաջադիմության ցուցակներով մեթոդական խորհրդի երաշխավորությամբ ԵՄՀ Գիտական խորհրդին ներկայացնում է առաջարկություն կրթաթոշակների տրամադրման վերաբերյալ:

1.6. Ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերելիս համալսարանի Ռեկտորը իրավասու է տվյալ մասնագիտության ուսանողների ցուցակը հետ վերադարձնել տվյալ ամբիոնի նոր մրցույթի կազմակերպման պահանջով:

1.7. Կրթաթոշակների չափը՝ ըստ մասնագիտությունների և պարգևատրվող ուսանողների թիվը որոշվում է Գիտական խորհրդի կողմից:

1.1. Եվրասիա միջազգային համալսարանը սահմանում է հետևյալ կրթաթոշակները:

1.1.1. «Օհանյան» կրթաթոշակ՝ բակալավրիատի ուսանողների համար,

1.1.2. «Եվրասիա» կրթաթոշակ՝ մագիստրատուրայի ուսանողների համար,

1.1.3. «Հետազոտական» կրթաթոշակ՝ ասպիրանտների և հայցորդների համար:

2. «Օհանյան» կրթաթոշակի տրամադրամն պայմաններ

2.1. «Օհանյան» կրթաթոշակը տրվում է բակալավրիատի լավագույն ուսանողներին, որոնք ունեն ամենաբարձր միջին որակական գնահատականը (ՄՈԳ): Այս կրթաթոշակը կազմում է ուսանողների մեկ կիսամյակի ուսման վարձի 10-100%-ը:

2.2. Ուսանողներին, ովքեր շահում են այս կրթաթոշակը, առաջարկվում է կամավորական հիմունքներով աշխատել (պրակտիկա անցնել) ԵՄՀ տարբեր ստորաբաժանումներում շաբաթական 1-10 ժամ:

2.3. Կրթաթոշակին կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր.

2.3.1. Ներգրավված են ԵՄՀ բակալավրիատի կթական ծրագրերում, որպես առկա կամ հեռակա համակարգով սովորողներ;

2.3.2. Ունեն նվազագույնը 3.5 միավոր ՄՈԳ;

2.3.3. Ակտիվորեն ներգրավված են կամ ցանկություն են հայտնել կամավորական հիմունքներով աշխատել ԵՄՀ որևէ ստորաբաժանումում և/կամ Ուսանողական խորհրդում:

2.4. Կրթաթոշակները տրամադրվում են կիսամյակի կտրվածքով՝ սկսած 2-րդ կիսամյակից (առաջին կիսամյակի արդյունքների հիման վրա) մինչև ուսումնառության յոթերորդ կիսամյակ:

2.5. Կրթաթոշակի մասին որոշումներն ընդունվում են յուրաքանչյուր կիսամյակի սկզբում և գործում են մինչև այդ կիսամյակի ավարտը: Համապատասխան որոշման կամ հրամանի մեջ պարտադիր նշվում է կրթաթոշակի տրման ժամկետը. աշնանային կիսամյակի համար՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը և գարնանային կիսամյակի համար՝ փետրվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը:

2.6. Ավարտական կուրսում (առկայի դեպքում՝ յոթերորդ և ութերորդ կիսամյակներում, հեռակայի դեպքում՝ իններորդ և տասներորդ կիսամյակներում) ուսանողներին կրթաթոշակ չի տրամադրվում:

3. «Եվրասիա» կրթաթոշակի տրամադրման պայմաններ

3.1. «Եվրասիա» կրթաթոշակը տրամադրվում է մագիստրատուրայի ուսանողներին՝ խրախուսելով հետազոտական աշխատանքը: Կրթաթոշակը կազմում է մեկ կիսամյակի ուսման վարձի 10-50%-ը:

3.2. Կրթաթոշակի չափը, պարգևատրվող ուսանողների թիվը որոշվում է Գիտական խորհրդի կողմից:

3.3. Կրթաթոշակին կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր.

3.3.1. Ներգրավված են ԵՄՀ մագիստրոսական կրթական ծրագրերում,

3.3.2. Իրականացնում են հետազոտական աշխատանք ԵՄՀ-ի և/կամ գործընկեր ձեռնարկության կողմից առաջնահերթություն համարվող թեմաների շուրջ,

3.3.3. Ունեն նվազագույնը 3.5 միավոր ՄՈԳ:

3.4. Այն ուսանողները, որոնք բավարարում են նվազագույն պահանջները և ցանկանում են մասնակցել մրցույթին պետք է ներկայացնեն մագիստրոսական թեզի հետազոտական պլան՝ ԵՄՀ կողմից ներկայացվող ձևաչափին համապատասխան:

ԵՄՀ-ի և/կամ գործընկեր ձեռնարկության կողմից առաջնահերթություն համարվող թեմաների շուրջ թեզ չգրելու դեպքում կրթաթոշակից օգտվող ուսանողները պարտավորվում են մինչև ուսումնական մագիստրոսական թեզի պաշտպանությունը՝ ԵՄՀ ԲԱՆԲԵՐ կամ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից ճանաչված այլ պարբերականում հոդված տպագրել (կամ այն ներկայացնել տպագրման):

Հոդված չտպագրելու (կամ տպագրմանը չընդունելու) դեպքում՝ ուսանողը պարտավոր է մինչև ավարտական թեզի պաշտպանությունը վերադարձնել տրամադրված կրթաթոշակի 50%-ը:

3.5. Կրթաթոշակների վերաբերյալ մրցույթը Հետազոտական ինկուբատորի կողմից հայտարարվում է առաջին կիսամյակի ընթացքում:

4. «Հետազոտական» կրթաթոշակի տրամադրման պայմաններ

4.1. «Հետազոտական» կրթաթոշակը տրամադրվում է ԵՄՀ այն շրջանավարտներին, ինչպես նաև աշխատակիցներին և դասախոսներին, որոնք չունեն գիտական աստիճան և ցանկանում են ուսումը շարունակել ասպիրանտուրայում:

4.2. ԵՄՀ շրջանավարտները կամ աշխատակիցները կարող են անվճար հիմունքներով սովորել ԵՄՀ առկա կամ հեռակա ասպիրանտուրայում, եթե հաղթահարում են ընդունելության պահանջները:

4.3. ԵՄՀ բակալավրիատը և մագիստրատուրան բարձր առաջադիմությամբ ավարտած և ԵՄՀ-ում 5 և ավելի տարի մասնագիտական աշխատանքի փորձառություն ունեցող աշխատակիցները կարող են անվճար հիմունքներով սովորել ԵՄՀ ասպիրանտուրայում կամ ձևակերպվել որպես հայցորդ:

4.4. ԵՄՀ բակալավրիատը և մագիստրատուրան բարձր առաջադիմությամբ ավարտած կամ ԵՄՀ-ում 5 և ավելի տարի մասնագիտական աշխատանքի փորձառություն ունեցող աշխատակիցները և դասախոսները կարող են ձևակերպվել որպես հայցորդ՝ մասնակի վճարով:

4.5. Կրթաթոշակի միջոցով անվճար սովորելու հնարավորության արժանացած աշխատակիցները պարտավորվում են սահմանված ժամկետներում պաշտպանել թեկնածուական ատենախոսությունը, հակառակ դեպքում՝ Գիտխորհրդի որոշմամբ պետք է փոխհատուցեն իրականացված ծախսերը:

5. Ուսման վարձի զեղչերի տրամադրման պայմաններ

5.1. ԵՄՀ ուսման վարձի զեղչերը և պայմանները սահմանվում են սույն կարգով:

5.2. Դիմորդների համար առաջին ուսումնական տարվա ուսման վարձի համար սահմանված են հետևյալ զեղչերը և արտոնությունները.

5.2.1. Անվճար՝ 16.00 և բարձր մրցութային միջին միավոր ունեցող դիմորդները,

5.2.2. 50% զեղչ՝ 12.00-15.99 մրցութային միջին միավոր ունեցող դիմորդները:

5.3. ԵՄՀ-ն, վճարովի համակարգում սովորող ուսանողների համար՝ ըստ առկա ֆինանսական հնարավորությունների, հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում (զեղչ) հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

5.3.1. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ ուսման վարձի 30 տոկոսի չափով,

5.3.2. 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ ուսման վարձի 50 տոկոսի չափով,

5.3.3. 26 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ ուսման վարձի 50 տոկոսի չափով,

5.3.4. մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ ուսման վարձի 50 տոկոսի չափով,

5.3.5. երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ ուսման վարձի 30 տոկոսի չափով,

5.3.6. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ ուսման վարձի 30 տոկոսի չափով,

5.3.7. մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ ուսման վարձի 30 տոկոսի չափով,

5.3.8. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ ուսման վարձի 20 տոկոսի չափով,

5.3.9. ԵՄՀ-ում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող ուսանող-աշխատողներին և հիմնական աշխատողների երեխա (ամուսին)-ուսանողներին հետևյալ չափով.

- ԵՄՀ-ում 3-7 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ 50%-ի չափով,
- ԵՄՀ-ում 7-15 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ 60%-ի չափով,
- ԵՄՀ-ում 15 տարի և ավելի աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ 80%:

5.3.10. այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին, որը կարող է սահմանվել ԵՄՀ ռեկտորի հրամանով:

5.4. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող, կամ արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է զեղչի առավելագույն չափը:

5.5. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունքից ուսանողները կարող են օգտվել սահմանված ՄՈԳ-ի շեմը հաղթահարելու դեպքում:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ՄՈԳ-ի շեմը սահմանվում է ԵՄՀ ռեկտորի հրամանով՝ մեթոդական խորհրդի ներկայացմամբ:

5.6. Ուսման վարձի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն ընդունվում են՝ տվյալ կիսամյակի դասերի մեկնարկից հետո 4 շաբաթվա ընթացքում:

Սահմանված ժամկետից հետո ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման:

5.7. Բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն

ուսումնառության 2-րդ կիսամյակից (բացառությամբ սույն կարգի 5.3.9-րդ կետով սահմանված կարգավիճակով ուսանողների, ովքեր զեղչից կարող են օգտվել ուսումնառության առաջին կիսամյակից)։

5.8. ԵՄՀ-ում սահմանված ուսման վարձի զեղչերը ուսանողներին տրամադրվում են մեկ ուսումնական կիսամյակի համար։

5.9. Ներկայացված արտոնություններն ու զեղչերը վերաբերում են միայն ՀՀ քաղաքացի հանդիսացող ուսանողներին։